

3505

Upphækkur
1927

116

U-1927-

91-71

9-83

57

891.71-3
9-83

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՅ

ՄՐԿԱՅԱՎԻ ՅԵՐԳԸ

20 03

2012

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐՂՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. == ՄՈՍԿՎԱ, 1927

891,71-3
4-83

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՅ

ՄՐՐԿԱՅԱԿԻ ՅԵՐԳԸ, ԲԱԶԵՅԻ ՅԵՐԳԸ,
ԸՆԿԵՐԸ, ԾԵՐՈՒՆԻՆՆԱԿԸ

1001
530 R



891,71-3

4-83

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՅ

ՄՐՐԿԱՅԱՎԻ ՅԵՐԳԸ, ԲԱԶԵՅԻ ՅԵՐԳԸ,
ԸՆԿԵՐԸ, ԾԵՐՈՒՆԻՆ,

1001
530 R



ՄՐՐԿԱՆԱՎԻ ՅԵՐԳԸ

Ծովի սպիտակավուն հարթութեան վրա մըրիկն անա ամպեր ե դիզում: Յեղ մըրկահավը՝ նման սև շանթի՝ հպարտ ճախրում ե ծով ու ամպի մեջ:

Մերթ ալիքներին թեւ բախելով, մերթ վորպես սլաք դեպի ամպերը թռչք գործելով, ճչում ե հավը,—և ամպերը վերից հրճվանք են լսում թռչունի յանդուզն, խիզախ կանչի մեջ:

Այդ կանչի մեջ ե մըրկի տենչանքը: Թափը ցատումի, հուրն ըղձանքի ու երաշխիքը գալոց յաղթութեան՝ այդ կանչի մեջ են լսում ամպերը:

Ճայերը հեծում են մըրկից առաջ,—հեծում, սլանում են ծովի վրայով և նրա խորքում պատրաստ են թաղել իրենց սարսափը մըրկից առաջ:

Հեծում են նույնպես և՛ ջրսուզակները, վորոնց խորթ ե ու անհասանելի կռվով վաստակած կյանքի հաճույքը, շանթ ու վորոտից սարսում են նրանք...

Տխմար թևատը յերկյուղով բռնված՝ խութերի մեջ ե իր գեր ու ճարպոտ մարմինը թազցնում...

Միայն վես, հպարտ Մըրկահավն ե ճախրում համարձակ ու խիզախորեն՝ փրփրադեզ, ճերմակ ջրերի վրա:

Ամպերը նախկինից ավելի մոռալ ու միշտ դեպի ցած՝ ծովի վրա յեն կախ ընկնում, դիզվում, և ալիքները երգով, շուրջպարով դեպի վեր ձգտում՝ շանթ ու վորոտին ընդառաջելու:

Ճայթում ե ամպրոպը: Յասման փրփուրի մեջ հեծում են ալիք, մըցում հողմի հետ: Մըրիկն ուժգին գրկախառնումով անա վորսում ե յերամն ալիքի ու մոլեգնորեն անարկու թավով շարտում նրանց ժայռերի վրա, ուր գերթ մանրամաղ փռու, ցնցուղի ե փոխում, փոխարկում զմրուխտի շեղջեր:

Մըրկահավը՝ նման սև շանթի՝ ճախրում ե կանչով և վորպես սլաք՝ ճեղքում ե ամպերն ու իր թևերով փրփուր ե կորզում:

Յեղ նա խելահեղ անա տարվում ե՝ որպես չար վոգի,— հպարտ, սեղաթույր, մըրկի վոգի,—և՛ քրքում ե, և՛ հեծեծում ե... Ամպերի վրա նա հրհուում ե, փնհուն բերկրանքից նա հեծեծում ե:

Շանթ ու վորոտի ցասման մեջ վաղուց՝ դգաստ վոգու պես՝ խոնջանք ե լսում. նա համոզված ե, վոր չեն քողարկի ամպերն արևին, վոչ, չեն քողարկի:

Հողմը վորոտում ե, ամպրոպը ճայթում... Կապույտ բոցերով հուրհրատում են ամպի յերամները ծովի անհատակ անդունդի վրա: Ծովը վորսում ե շանթի սլաքներն ու իր հորձանքում հանգցնում նրանց: Այդ վորոտների արտացոլումներն՝ իրրև հուր ոճեր՝ շողում են ծովում, անհետ կորչելով:

— Մըրիկ, շուտով մըրիկ կայայթե սաստիկ:

Դա խիզախ ու վես Մըրկահավն ե հպարտ ճախր առնում ցասկոտ վորոտացող ծովի յերեսին ցիր ու ցան յեղած շանթերի միջև, և յաղթանակի Մարգարեն անա կանչում ե, գոչում.

— Փոթորիկն անեղ թող ուժգին պայթե:

ԲԱԶԵՅԻ ՅԵՐԳԸ

I

Բարձրաբերձ սարերն ի վեր սողաց Իժը ու փոփեց
այնտեղ խոնավ կիրճի մեջ և կծիկ դարձած՝ դիտում եր ծովը:

Բարձր յերկնակամարի վրա փայլում յեր արևը, ու
լեռները տոթագին շնչում եյին յերկինքն ի վեր, և ցածրում
ալիքները զարնվում եյին ամբակուռ բարին...

Յեվ ձորակով, խավարի ու ցնցուղի մեջ, հեղեղատն
ընդառաջում յեր, նետվում դեպի ծով, բարերի բաշից թռիչք
գործելով:

Գլխովին ճերմակ փրփուրի փոխված, ալեգարդ-հուժկու, ճեղքում
յեր սարը և ծովը թափվում՝ ցասկոտ կականով:

Յանկարծ այդ նույն կիրճը, ուր Իժը կուտապվեց,
յերկնից գահավեժ վայր ընկավ Բագեն՝ փշրված կրճքով,
արյունաշաղախ թևերի վրա...

Կարճատև կանչով նա ընկավ գետին, անզոր ցասման
մեջ՝ կրճքով զարնվեց ապառաժ բարին...

Իժը զարնուրեց, յետ սողաց շտապ, բայց շուտ ըմբռ-
նեց, վոր թռչնի կյանքը կտես միայն մեկ-յերկու վայր-
կյան...

Նա սողաց մոտիկ վիրավոր թռչնին և շաչեց ուղիղ նրա
աչքի մեջ.

— Մեռնո՞ւմ յես, ի՞նչ է:

— Այ՛ո, մեռնո՞ւմ եմ,— շնչաց Բագեն՝ խոր հառա-
չանքով: Յես ապրեցի փառավոր կյանքով... Յես ըմբռնում

եմ յերջանկությունը... Յես մաքառեցի խիզախ-անվհատ...
Տեսա յերկինքը... Իսկ դու չե՛ս տեսնի նրան մոտիկից...
Ա՛յ թշվառական:

— Բայց ի՞նչ է յերկինքը... Դատարկություն... Յես
ի՞նչպես սողամ դատարկության մեջ: Այստեղ ինձ համար
հրաշալի յես... և՛ տաք, և՛ խոնավ:

Այդպես առարկեց Իժն ազատ թռչնին և խնդաց իր
մեջ Բագեյի վրա՝ նրա խենթ-խելառ մտքերի համար:

Յեվ մտածում եր. «Թռչես թե սողաս» վերջն ակնհայտ
է. ամենքն ել պիտի գետին անցնեն, ամեն ինչ նորեն
փոշի՛ պիտ դառնա»...

Բայց արի Բագեն հանկարծ ցնցվեց, բարձրացավ փոքր
ինչ և աչքը կիրճի չորս դին շուռ աճեց:

Մոխրավուն ժայռից ջուրն եր սողոսկում, և ճեղձուցիչ
եր մթին ձորի մեջ, ուր տարածված եր գարշահոտություն:

Յեվ ճչաց Բագեն անձկակարոտ ու կսկծագին, ճիգ
գործ դնելով:

— Ո՛ր, թե վոր գեթ մեկ ել յես կարենայի յերկինք
բարձրանալ... կրճքիս վերքերուն կսեղմեյի յես իմ ախո-
յանին... և նա կխեղդվեր արյունովս անշուշտ:

— Ո՛ր, յերջանկություն կովի-պայքարի:

Իսկ Իժը խորհում եր. «Յերկնքում, անշուշտ, պե՛տք է
վոր ապրելը հաճելի լինի, բանի վոր այդպես հառաչում
է նա»...

Յեվ հորդորեց նա ազատ թռչունին. «Մոտեցի՛ր ուրեմն
ձորաբերանին ու ցա՛ծ նետիր քեզ:

Գուցե թե թևերդ քեզ բարձրացնեն և տարերային
ուժիղ մեջ դեռ ես մի փոքր ել ապրես»:

Յեվ ցնցվեց Բագեն. նվաղկոտ ճիչով շարժվեց դեպ
անդունդը, և մագիլներով սըլլած ու սահեց բարի լայրձուն
մակերևույթին:

Յեվ մոտեցավ նա, ուղղեց թևերը, խորը հառաչեց,
փայլ տվին աչքերը ու... գահավեժ՝ անդունդը գլորվեց:

Յեվ ինքն, ինչպես բար, սահեց ժայռերից, վայր ընկավ արագ, փշրելով թեւերը, փետուրները ցիր-ցան...

Ալիքը հեղեղատի նրան ընդգրկեց և լվանալով արյունը բոսոր, փրփուր հագցրեց, խաղաց դեպի ծով:

Ծովի ալիքները թախծոտ վոռնոցով՝ գալիս քարերին ելին զարնվում: Յեվ թռչունի դին՝ ել չեր նշմարվում ծովային անձիր տարածության մեջ:

II.

Կիրճի մեջ փոված՝ Իժը խորհում էր յերկար ու բարակ՝ թռչունի մահվան՝ և դեպ յերկինքը նրա ունեցած կրքոտ ու անզուսպ տենչանքի մասին:

Յեվ ահա նա աչքի անցրեց այն տարածությունը, վոր շոյում է աչքը հավիտենապես՝ բախտավորության բաղցր իղձերով:

— Իսկ ի՞նչ էր տեսնում նա՝ մեռնող Բաղեն՝ անտակ անդունդի ամալության մեջ: Ինչո՞ւ յեն ինքն ու իր նմանները մեռնելու պահին հուզվում հոգեպես՝ առ յերկինքն ունեցած թոխչքի սիրով: Ի՞նչն է արդոյք, վոր նրանց այնտեղ հայտնի չէ դառնում: Իսկ չե՞ վոր ինքս ել՝ թեկուզ կարճատե կերկինք թռչելով՝ կկարենայի գիտնալ ամեն ինչ:

Ասաց ու արավ: Ողակ դառնալով նետվեց ողի մեջ և, հար ու նման նեղ ժապավենի, փայլեց, պըսպըղաց վառ արեի տակ:

Սողալու ծնվածը՝ թռչել չի կարող... այդ մոռանալով, ընկավ քարերին, բայց չսատակեց, այլ խնդաց քահ-քահ...

— Ահա՛ թե ինչն է առ յերկինքը տածած հրապույրը թոխչքի: Այդ հրապույրն անկումի մեջ է... Ծիծաղելիներ: Յերկրին անգիտակ, ձանձրացած այստեղ, նրանք ձգտում են վեր՝ դեպի յերկինք, և կյանք վորոնում լսանձող-տոչորող անապատի մեջ: Այնտեղ իշխում է լոկ դատարկություն: Լույսը շատ է այնտեղ, բայց սնունդ չկա, և վո՛չ իսկ նեցուկ՝ կենդանի մարմին: Ինչո՞ւ համար յեն՝ սին գոռոզությունն

ու նախատինքներ: Նրա՛ համար, վոր անմտությունն իրենց ցանկությանց ծածկել կարենան և նրանց հետև ըողարկեն իրենց ապիկարությունը՝ կյանքի գործերում: Ծիծաղելիներ... Բայց նրանց ձուներն այժմ այլ ևս բնավ յերբեք չեն կարող մոլորեցնել ինձ: Յես ինքս արդեն գիտեմ ամեն ինչ... Տեսա յերկինքը... և թոռ այնտեղ, չափեցի նրան, իմացա անկումը, բայց չջարդվեցի, և այժմ միայն այլելի՛ ևս հաստատ-աներեր հավատում եմ ինձ: Թող այն ամենքը, վոր անկարող են յերկիրը սիրել, ապրեն պատրանքով: Յես ըմբռնեցի ճշմարտությունը: Յեվ նրանց կոչին չեմ հավատա յես: Յերկրի ստեղծած՝ յերկրով ել կապրեմ:

Յեվ նա կուտապվեց ժեռ քարի վրա՝ հպարտ ինքն իրմով:

Փայլիլում էր ծովը համակ-անապարհակ պայծառ լույսի մեջ, և սպառնացայտ ալիքը հուժկու՝ ափերին ելին գալիս զարնվում:

Առյուծամուռնչ նրանց ձայնի մեջ թնդում էր յերգը վես թռչնի մասին, դողում էր ժայռը նրանց զարկերից, գողում էր յերկինք գոռխրոխ յերգից:

Քաջերի խենթությանը՝ մենք փառք ենք յերգում:

Քաջերի խենթությունը՝ իմաստն է կյանքի:

«Ո՛հ, խեղախ Բաղե: Վոսոխների հետ մղած կովի մեջ արնաքամ յեղար... Բայց կգա ողը, և կաթիլները արյանքո բոսոր՝ կայծերի նման պիտի բորբոքվեն կյանքի խավաբում ու շատ համարձակ սրտեր պիտ վառեն՝ ազատության, լույսի խելառ ծարավով:

«Թող մեռա՛՞մ լինիս... Բայց հագով արի քաջերի յերգում դու մի՛շտ կմնաս կենդանի տիպար և հպարտ մի կոչ— դեպ ազատություն ու դեպի լո՛ւյսը:

«Քաջերի խենթությանը՝ մենք գովք ենք յերգում...»

ԸՆԿԵՐ

I.

Այդ քաղաքում ամեն ինչ տարրորինակ էր, ամեն ինչ անհասկանալի: Շատ յեկեղեցիներ էյին դեպի յերկինք բարձրացրել իրենց խայտաբղետ, վառ գլուխները, բայց գործարանների պատերն ու ծխնելույզներն ավելի բարձր էյին զանգակատներից: Յեզ յերբ յեկեղեցիների զանգակներն աղոթքի էյին հրավիրում, նրանց պղնձային զողանջը տանիքների թիթեղների վրայով սողալով անուժ կորչում էր տների անձուկ ճեղքերում:

Տներն հսկայական էյին և հաճախ գեղեցիկ, մարդիկ՝ այլանդակ ու միշտ անպետք. առավոտից մինչև իրիկուն նրանք անհանգիստ, ծեր մկներ յման վազվզում էյին քաղաքի նեղ, ծուռ ու մուռ փողոցներով և ազահ աչքերով փնտռում էյին վոմանք՝ հաց, մյուսները՝ զվարճութուն, յերրորդները՝ փողոցների հատման կետերում կանգնած, թշնամորեն և աչալուրջ հսկում էյին, վորպեսզի թույլերն անտրտունջ հետեեն ուժեղներին: Ուժեղ համարում էյին հարուստներին. բոլորն հավատացած էյին, վոր փողը մարդուն տալիս է իշխանութուն և ազատութուն:

Բոլորն էլ իշխանության էյին ձգտում, վորովհետև բոլորն էլ ստրուկ էյին. հարուստների փարթամությունն առաջացնում էր աղքատների նախանձն ու ատելութունը, վոչ վոք չէր ճանաչում ավելի լավ յերաժշտութուն, քան

վոսկու հնչյունը, այդ պատճառով էլ մեկը մյուսին թշնամի յէր, իսկ բոլորին իշխողը՝ անգթությունը:

Յերբեմն քաղաքի վրա փայլում էր արեգակը, սակայն կյանքը միշտ խավար էր, մարդիկ ստվերների նման: Գիշերները նրանք բազմաթիվ զվարթ կրակներ էյին վառում, բայց այդ ժամանակ փողոց էյին դուրս գալիս քաղցած կանայք՝ փողով վաճառելու իրենց փաղաքշանքները, ամեն կողմից բուրում էր զանազան խորտիկների ճարպահոտը, և ամեն տեղ լուռ ու ազահ, վայրագորեն փայլում էյին քաղցածների չար հայացքներն, իսկ քաղաքի վրա հանդարտ լողում էր թշվառության զսպված հառաչանքն, առանց իր մասին բարձրաձայն ազդարարելու ուժ ունենալու:

Բոլորն ապրում էյին տաղտկալի ու անհանգիստ, բոլորը թշնամիներ ու հանցավորներ էյին, միայն քչերն էյին իրենց ճշմարիտ համարում, սակայն նրանք կոպիտ էյին, ինչպես անասուններ. այդպիսիներն անգուժ էյին ամենից ավելի:

Բոլորն ապրել էյին ուզում և վոչ վոք չգիտեր, չէր կարողանում ազատորեն գնալ իր ցանկությունների ուղիներով, ու դեպի ապագան արած յուրաքանչյուր քայլ անգիտակցաբար ստիպում էր նրանց յետ նայելու ներկային, իսկ ներկան ազահ հրեշի գորեղ ու ամրակուռ բազուկներով կանգնեցնում էր մարդուն իր ճամբին և իր լարձուն գիրկն առնում նրան:

Մարդը՝ վշտոտ ու անգիտակ, անկարող կանգ էր առնում կյանքի այլանդակ դեմքի հանդիման: Հազարավոր անողնական-վշտոտ աչքերով նայում էր նա մարդու սրտի խորքն ու ինչվոր խնդրում. և այն ժամանակ հոգու մեջ մեռնում էյին ապագայի վառ պատկերներն ու մարդու անողնականության հառաչանքը խեղդվում էր կյանքից տառապած, թշվառ, խղճուկ մարդկանց աններդաշնակ հառաչանքների ու վողբի մեջ:

Միշտ տխուր էր, միշտ անհանգիստ. յերբեմն սարսափելի, իսկ մարդկանց շուրջը՝ ինչպես բանտ, անշարժ կան-

գնած եր արևի կենսատու շողերը վանող այդ մուսյլ, խա-
վար քաղաքը, տաճարներն իր մեջ կլանած այդ քարակույտը:

Ու կյանքի յերաժշտությունը վոխակալության և ցա-
վի ճնշված հառաչանքն եր, գաղտնի ատելության մեղմ
շրջակը, անգթության անեղ վոռնոցը, բռնաբարության հեշ-
տասիրական ճիչը...

II.

Յավի ու խեղճության մուսյլ հոգսի, ագահության ու
կարիքի ջղաձգական պայքարի, խղճուկ ինքնասիրության
ճահճի, տների նկուղների մեջ՝ ուր ապրում եր քաղաքի
հարստությունն ստեղծող աղքատությունը, աննկատելի
շրջում էյին միայնակ յերագողներ, լի հավատով դեպի
մարդիկ՝ բոլորին ոտար ու հեռու՝ քարոզիչները դժգոհու-
թյան, խռովահույզ կայծերը հեռավոր խարույկի: Նրանք
միշտ իրենց հետ նկուղներն էյին բերում պտղավետ, ման-
րիկ սերմերը պարզ ու մեծ ուսման և յերբեմն մուսյլորեն,
աչքերի սառը փայլով՝ յերբեմն քնքշանքով ու սիրով, ցա-
նում էյին այդ պարզ, այրող ճշմարտությունը մարդ
ստրուկների խավար սրտերում, մարդկանց, վորոնք ան-
գութների կամքով դարձել էյին ագահների ուժը, հարստա-
նալու կույր ու համր գործիքները:

Յեվ այդ խավար, հալածված մարդիկ կասկածանքով
ունկնդրում էյին նոր խոսքերի յերաժշտության, յերա-
ժշտության, վորին վաղուց և անորոշ կերպով ագահաբար
սպասում եր նրանց մեծ սիրտը: Նրանք կամաց-կամաց
բարձրացնում էյին իրենց գլուխները, քանդելով խորամանկ
կեղծիքի հանգույցները, վորոնցով փաթաթել էյին նրանց
ուժեղ ու ագահ հարստահարիչները:

Նրանց խուլ, գսաված վոխակալությամբ լի գոյության
մեջ, բազմաթիվ վիրավորանքներով թունավորված սրտե-
րում, ուժեղների իմաստությանց խայտաբղետ կեղծիքնե-
րով ապականված գիտակցության մեջ, ստորացման տա-

ռապանքով թունավորված դժվարին, տխուր կյանքի մեջ
ընկավ մի պարզ, լուսավոր մի բառ՝

— Ընկե՛ր...

Նոր չեր այդ բառը նրանց համար. նրանք՝ լսել ու
իրենք ել արտասանել էյին, նա ել մինչ այդ հնչում եր
նույնպես դատարկ ու բուժ, ինչպես բոլոր տրորված բառերը,
վորոնք կարելի չե մոռանալ, առանց վոչինչ կորցրած
լինելու:

Սակայն այժմ նա՝ պարզ և ուժգին՝ այլ կերպ եր
հնչում, նրա մեջ այլ հոգի չեր յերգում և աղամանդի նը-
ման մի ինչվոր կարծիք, շողշողուն ու բազմադեմ բան կար
նրա մեջ:

Նրանք ընդունեցին այն և սկսեցին արտասանել
զգուշությամբ, խնամքով, քնքշանքով որորելով նրան իրենց
սրտերում, ինչպես մայրն է որորում նորածնին՝ նրանով
զմայլած:

Ու վորչափ խորն էյին նայում այդ բառի լուսավոր
հոգու խորքը, այնքան պայծառ, նշանակալից ու լուսավոր
եր յերևում նա նրանց:

— Ընկե՛ր,—ասում էյին նրանք:

Յեվ զգում էյին, վոր այդ բառը յեկել է միավորելու
ամբողջ աշխարհը, ըլոր մարդկանց ազատության աստի-
ճանին բարձրացնելու և կնպելու նրանց նոր, դեպի մի-
մյանց ունեցած հարգանքի հանգույցներով, հարգանքով
դեպի մարդու ազատությունը, ի սեր նրա ազատության:

Յերբ այդ բառն արմատակալեց ստրուկների սրտե-
րում, նրանք դադարեցին այլևս ստրուկ լինելուց ու մի
անգամ հայտարարեցին քաղաքին ու նրա բոլոր ուժերին
մարդկային վեհագույն խոսքը՝

— «Ձե՛մ ցանկանում»:

Այն ժամանակ կանգ առավ կյանքը, վորովհետև—
նրանք էյին նրան շարժող ուժը, նրանք և ուրիշ վո՛չ վորե-
կանգ առավ ջրի հոսանքը, հանգավ կրակը, քաղաքը թաղ-

վեց խավարի մեջ, և ուժեղները դարձան ինչպես մանկիկներ:

Վախը պատեց բռնապետների սրտերը, և իրենց փախանքի հոտից շնչահեղձ, նրանք զսպեցին իրենց վոխակալութունը խոռվարարների դեմ, նրանց ուժի հանդեպ տարակուսած ու սարսափահար:

Քաղցի ուրվականը կանգնեց նրանց դեմ ու նրանց մանկիկները աղերսալի արտասովում էյին խավարի մեջ:

Սավարով պարուրված տներն ու տաճարները ձուլվեցին քարի ու յերկաթի մի ընդհանուր անսիրտ քաոսում, չարագուշակ լուսթյունը տիրեց ամեն տեղ, և դադարեց կյանքը:

Որերը տառապանքի որեր էյին ուժեղների համար, նրանց՝ վորոնք իրենք իրենց կյանքի տերն էյին համարում. գիշերները (յուրաքանչյուրը կարծես հազար գիշեր լիներ) այնպես թանձր եր խավարը, այնպես խղճուկ ու դողդոջուն էյին փայլում կրակները մեռած քաղաքում, և այն ժամանակ նա դարերով ստեղծված, մարդկային արյունով սնված այդ հրեշք յերևաց նրանց իր վոչնչության այլանդակությամբ, քարերի ու փայտերի խղճուկ կույտերով: Սառն ու մռայլ տների կույր լուսամուտները փողոց էյին նայում, խկ փողոցներով աշխույժ անցնում էյին կյանքի հարագատ տերերը: Նրանք մյուսներից ավելի էյին քաղցած, բայց դա նոր չէր նրանց համար ու նրանց մարմինների գալարումները չէյին հասնում կյանքի տերերի գալարումների աստիճանին, նրանց հոգու կրակը չէր հանգչում: Նրանք բոցավառվել էյին իրենց ուժի գիտակցությամբ, հողթանակի նախագրացումը քայլում էր նրանց հայացքներում:

Նրանք քայլում էյին քաղաքի փողոցներով՝ իրենց մռայլ ու անձուկ բանտով, ուր նրանց արհամարհել էյին, վիրավորանքով բզբտել հոգիները, ու տեսնում էյին իրենց աշխատանքի մեծ նշանակութունը, և այդ բարձրացնում էր նրանց այն գիտակցության, վոր իրենց սրբազան իրա-

վունքն է լինել կյանքի տերը, նրա որենսդիրն ու ստեղծագործիչը: Այն ժամանակ նոր թափով, շլացուցիչ պայծառությամբ կանգնեց նրանց առաջ կենսատու, միավորող բառը՝

— Ընկե՛ր:

Նա իրականության մեջ յեղած կեղծ բառերի մեջ հնչում էր վորպես ապագայի, նոր կյանքի ուրախ համբավ, այն կյանքի, վորն ազատ է հավասարապես բոլորի համար՝ հեռու թե մոտիկ: Նրանք զգում էյին, վոր այդ իրենց կամքից է կախված, իրենք են մոտեցնում ազատությունն ու իրենք են հեռացնում նրա գալուստը:

III.

Պոռնիկը, վոր դեռ յերեկ մի կիսաքաղց կենդանի յեր, ցիխոտ փողոցներում վշտահատ սպասող, վոր մեկն ու մեկը դա և գրոշներով կուպտաբար գնե հարկադրական փաղաքշանքները, պոռնիկն անգամ լսեց այդ բառը, բայց, շփոթված ժպտալով, չէր համարձակվում ինքը կրկնել այն: Նրան մոտեցավ մի մարդ, վորի նմանին նա մինչև այդ չէր տեսել, ձեռքը դրեց ուսին ու հարագատի լեզվով ասաց՝

— Ընկե՛ր:

Ու պոռնիկը ծիծաղեց մեղմ և ամոթխած, վորպեսզի անարգված հոգու առաջին անգամ զգացած ուրախությունից չարտասովի: Դեռ յերեկ կյանքին անամոթ ու քաղցած կենդանական բութ հայացքով նայող նրա աչքերում փայլեցին առաջին մաքուր ուրախության արցունքները:

Չալածվածների ամբողջ աշխարհի աշխատավոր ընտանիքի հետ ունեցած հաղորդակցության այդ ուրախությունը փայլում էր ամենուրեք քաղաքի փողոցներում, և տների խամրած հայացքները հետևում էյին նրան ավելի ու ավելի չարագուշակ, ավելի սառնությամբ:

Աղքատը՝ վորից ազատվելու համար կուշտերը դեռ յերեկ փշրանքներ էյին նետում նրան՝ նույնպես լսեց այդ

բառը և այդ նրա առաջին ստացած վողորմութիւնն ևր,
վորը նրա չքավորութիւնից մաշված, վողորմելի սրտից
շնորհակալութեան հուզմունք դուրս կորզեց:

Կառապանը, մի ծիծաղելի յերիտասարդ, վորի ծոծ-
րակին հեծյալները միշտ հարվածում էին, վորպեսզի նա
էլ այդ հարվածն անդրադարձնէ իր սոված, ուժասպառ
ձիուն, այդ՝ շատ անգամ ձեծված, սալահատակի քարերի
վրա գլորվող անիվների դրոյունից բթացած մարդն էլ՝
լայն ժպտալով, ասաց անցորդին՝

— Հ՞ը, տանեմ, ընկե՛ր...

Ասաց ու կանգնեց: Ժողովեց յերասանները, պատ-
րաստ արագ բռնու և նայեց անցորդին, անկարող իր լայն,
կարմիր դեմքից ջնջելու ուրախ ժպիտը:

Անցորդը նայեց բարի աչքերով և գլուխը շարժելով,
պատասխանեց՝

— Ծնորհակալ եմ, ընկե՛ր, ինքս կերթամ, մոտիկ ե:

— Ե՛լս դու, ազնի՛վ մոր զավակ... — վողորմած բա-
ցականչեց կառապանը, լայն և ուրախազին թարթելով աչ-
քերը և դրոյունով ու աղաղակով բռեց կառքը:

Մարդիկ հոծ շարքերով քայլում էին մայթերով և,
ինչպես կայծը, նրանց մեջ ավելի հաճախ եր բոցավառվում
վեհ՝ բառը, վոր կոչված եր միավորելու ամբողջ աշխարհը.—

— Ընկե՛ր:

Վոստիկանը՝ հաստ բեխերով, պատկառելի ու մոայլ՝
մոտեցավ փողոցի անկյունում ծերուկ ճառախոսին խիտ
շրջափակած ամբոխին և, ուկնդրելով նրա ճառը, առանց
շտապելու, ասաց՝

— Հավաքվելն արգելված ե... ցրվեցեք, պարոնայք...

Ապա լռեց մի վայրկյան, հայացքը գետնին խոնարհեց
ու կամացուկ ավելացրեց՝

— Ընկերնե՛ր...

Նրանց դեմքերի վրա, վորոնք իրենց սրտերում կրում
էին այդ բառը, վորոնք նրա մեջ գրել էին միս ու ար-
յուն և միավորման կոչերի մեջ՝ պղնձային զիւ ձայն՝ նրանց

դեմքերի վրա փայլում եր յերիտասարդ ստեղծագործող-
ների հպարտ զգացմունքը, և ակնահայտնի յեր, վոր այն
ուժը, վորով նրանք այդպես առատորեն ներշնչում էին
այդ կենսատու բառը, անխորտակելի յե, անսպառ:

Արդեն նրանց դեմ հավաքվել եր զինված մարդկանց
գժգոյն, կույր ամբոխը և լուռ շարքեր էին կազմում. դա
հարստահարիչների վոխն եր պատրաստվում հետ վանելու
արդարադատութեան ալիքը:

Իսկ հսկայական քաղաքի նեղ, ճնշող փողոցներում,
նրա անհայտ ստեղծագործողների ձեռքով կանգնեցրած
լուռ, սառը պատերի մեջ շարունակ աճում ու հասունա-
նում եր մարդկանց յեղբայրութեան մեծ հավատը՝

— Ընկե՛ր:

Մերթ այնտեղ, մերթ այստեղ առկայծում եր բոցա-
վառվելու կոչված հուրը, վորն ընդգրկելու յեր աշխարհը՝
բոլոր մարդկանց ազգակցութեան վառ զգացումով: Նա
կընդգրկէ ամբողջ աշխարհն ու կայրե, կփոշիացնէ մեզ այ-
լանդակող չարիքը, ատելութիւնը և անգթութիւնը: Նա
կընդգրկէ բոլոր սրտերը և կձուլէ նրանց մեկ ընդհանուր
համաշխարհային սրտի՝ ճշմարիտ, ազնիվ մարդկանց սրտի,
վորպես ազատ բանվորների անբաժան-հարազատ ընտանիք:

Ստրուկների ստեղծած մեռած քաղաքի փողոցներում,
ուր անգթութիւնն է թագավորում, աճեց ու ամբապնդ-
վեց հավատը մարդու, վոր հաղթանակելու յե ինքն իրեն
ու աշխարհի չարիքին:

Յեւ անհանգիստ, անմխիթար կյանքի անորոշ քառ-
սում, վորպես պայծառ, ուրախ աստղիկ, վորպես ապա-
գայի ուղեցույց կրակ, փայլում է պարզ, սրտի նման խորը
մի բառ.

— Ընկե՛ր:

1001
535

ԾԵՐՈՒՆԻՆ

...Մարդիկ շրջապատել էին Կյանքը խիտ բազմութեամբ, ինչպես կեղտոտ մուրացկաններն հարուստ վաճառականի կնոջը յեկեղեցու զավթում, հառաչում էին, դանգատվում և չարամտորեն արտասովելով, վողորմութիւն, ուշադրութիւն էին խնդրում դեպի իրենց, ցավալի պարսավանքներ ժայթքելով միմյանց ու Կյանքի վրա, իրենց ազանութեան ջղաձգումներով, զգվելի կատաղութեամբ, մուրացկանական ցանկութիւններով սողում էին նրա վտարերի տակ:

Գալարվելով ու ցատկոտելով, ինչպես սլլկուն գորշ դողոններ ու սառն իժեր, իրենց թուլութեամբ թունագուրկ՝ նրանք վռնում էին անմիտ աղաղակով և, իրենց մանր ցանկութիւնների փոշիով կուրացած, չէին տեսնում Կյանքի արեգակնային դեմքը: Իսկ նա, իր ծիածանային փայլը տարածելով, խոնարհվում էր նրանց վրա զգոն ժպտով ու լռում էր, համբերութեամբ ունկնդրելով հառաչանքների ու զանգատների զգվելի յերաժշտութիւնը:

— Դու միտրինակ ես, դու աղքատ ես,— ձանձրութից չարացած, ասում էր նրան հագեցածը:— Աշխարհում յես ամեն տեղ յեղա, ամեն ինչ հետախուզեցի, տեսա անցյալի բոլոր ավերակները, գիտեմ ներկայի հուզերն ու հույսերը: Ինչի՞նչ ես պետք ապագան: Յես կարծում էի, վոր անթիվ են քո պարզները, անսպառ՝ առատաձեռնութիւնդ, բայց... չկա այլևս յերկրի վրա վոչինչ, ինչ տեսնել կամենայի:

Ինչ ցանկայի ունենալ: Տուր ինձ նոր ցանկութիւններ, ցույց տուր հնարավորութիւններ, վոր հասնեմ կատարելութեան, վոր նորից կենդանանա իմ հոգին բազմաթիվ պապականներով: Տուր ինձ նորութիւն, առաջնորդիր իմ հետաքրքրութիւնը դեպի աներևույթը, յեթե անսահման եք պարունակութիւնը, ինչպես այդ թիւում եր ինձ յերիտասարդ ժամանակս: Սակայն յես ամբողջպես ընդգրկել եմ քեզ: Դու աղքատ ես, ինչպես մուրացկան...

Ստրուկն աղաչում էր նրան.

— Այնպես արա, վոր ուժեղներն իրենց ծանր վտարելով իմ ազատութիւնը չվտանահարեն, յեթե դու արդարագատ ես: Յես ստրկական աշխատանքից հյուժվել եմ, յես ինձ պետք հացը չունեմ, իմ գավակները մեռնում են քաղցից, և վոչվոր չի խղճում ինձ: Ուժեղների մեջ խղճահարութիւն զարթեցրու դեպի թուլերը, վողորմիր տառապածներին, յեթե դու արդարագատ ես:

— Ինչու յես գոյութիւն առել դու,— հարցնում էր գիտնականը,— ի՞նչ իմաստ է ներփակվում քո խաղի խայտաճամուկ քառոսում: Ինչու՞ յեն տանջվում այս բոլոր մարդիկ: Պատասխանիր, յեթե դու իմաստուն ես:

— Դու վոչ թե իմաստութեան, այլ անմտութեան մարմնավորումն ես,— գիտնականից հետո ասում էր պոետը:— Խաղալիքներից ձանրացած յերեխայի նման դու խորտակում ես մարդկանց տանջանքներով ստեղծածները, ո՛ր, ժամանակի ստրուկ: Դու կոպտորեն նշավակում ես մարդկային ամենալավ զգացումը՝ սերը, վորին ե պարտական իր գոյութեամբ ծիծաղելի սատանայի խղճուկ ստեղծագործութիւնը:

— Դու խաբեցիր ինձ,— բարկացած փնթփնթում էր անատամ, ճաղատ մարդը, թափված քթով:— Յես յերիտասարդ էի, սրտիս վողջ թափով յես սիրում էի քեզ, յերիտասարդութեանս ամբողջ կարողութիւնը յես նվիրեցի կանանց սիրուն՝ քո մարմնավորումներից ամենալավին: Սակայն բավականութեան գավաթի հատակում դու գրիր հիվանդութեան զազրելի թույնը և խորտակեցիր իմ ուժեղ

մարմինը, կողոպտեցիր ինձ, ինչպես ավազակն անցորդին: Տուր ինձ առողջությունս, դեմքս այլանդակող հրեշ:

— Քո գրկում տեղ ցույց տուր ինձ,—կսկիծով գոչում եր դժբախտը:

— Յես կամենում եյի քո դաշտերում յերկրագործ լինել, բայց ուժ չունեմ, կամենում եյի իմաստության առաջնորդ դառնալ՝ չգիտեմ ու՞ր ե ճշմարտությունը և ի՞նչ քարոզեմ, մարդկանց մոլորության մեջ չզցելով: Կամենում եյի պատկերացնել քո բազմատեսակ դեմքը, բայց տաղանդ չունեմ. կամենում եյի գրի առնել քո գործերի պատմությունը, բայց չունեմ այդ ձիրքը: Ո՛ր, ինչու յես ստեղծել ինձ կարճ մատներով,—յերածի՛շտ եմ ուզում դառնալ: Ի՞նչ անեմ, սովորեցրո՛ւ, յեթե դու խելոք ես:

— Ինչո՞ւ կույր եմ յես,—հարցնում եր կույրը, Չղաճգորեն ծրմուկով իր մեռած դեմքը: — Ինչո՞ւ ինձ կույր ստեղծեցիր:

Յեվ նույնիսկ խո՛ւլ ու համբերն ինչպիսի բառաչում եյին, արագ շարժելով մատները:

Միայն յերեսաներն ու արբածներն եյին ուրխի:

— Քչի՛ր դրանց բոլորին,—յերերվելով բղավում եր մի արբած:—Այնպիսի անպիտաններն են... աղմկում են, աղմկում... Ո՞վ մարդուն գինի կխմեցնի, յեթե ինքը չի խմում:

Նա ծիծաղեց ու անցավ:

Կանայք, բարկացած իրենց սեռի ցավով, չարացած՝ մայրության անբախտություններից, խորտակված՝ իրենց սիրո հարվածներից, կանայք՝ քաղցած անիծում եյին և արտասովում հուսահատ:

Ու շատերն անձնասպան եյին լինում. մի քանիսը՝ վորպեսզի իրենց դիակը գցեն իրենց սերը քացասողի ճանապարհի վրա, մյուսները՝ վորպեսզի հանգցնեն իրենց կրքում Կյանքի հանդեպ ունեցած վախի զգացումը, բոլորը՝ վորովհետև զգում եյին իրենց վոչնչությունը:

Յեվ միայն մի քանիսը—հպարտությունից... բայց այդպիսիների մահն աննկատելի յեր մնում:

Կարծես կատաղի ճանճերի մի խումբ, պտտվում եյին նրանք վոխակալ բարկության պարի մեջ, թունավորելով մեկը մյուսի ցավն ու վերքերը իրենց գանգատների կծու դառնությամբ: Յեվ քայքայման հառաչանքների, ագահության վայրի կոծի մեջ հնչվում եր յերեսաների անհոգ ծիծաղը, վորպես աղբյուրի քչքչոց, Կյանքին զոհ բերելով սիրելի ծիծաղը՝ խաղաղ թմրության ուժերով:

* * *

Այդ պարի միջով միայնակ անցնում եր ծերունին, իր դանդաղ քայլերն ուղղելով դեպի արևը, վորը յերկնքից իջնելով, յերկրի մոլթ ծածկոցը ներկում եր հրաժեշտի վերջին բոսորագույն ճառագայթների փնջերով: Նա գնում եր հանդիստ, լուռ, ու շրջապատի աղմուկը չեր գրավում նրա ուշադրությունը: Յերեկոյան յերկնքի հրե խաղով կլանված, նա առաջ եր նայում ու քնքշորեն ժպտում:

— Ծերո՛ւկ,—գոչում եյին նրան,—դու ել քո գանգատներն ասա:

Նա բացասաբար շարժում եր գլուխը:

«Յես իմ կրծքի տակ գանգատներ չունեմ,—ասաց նա.—յես միշտ յեղել եմ Կյանքի ընկերը ու նրա ընկերն եմ՝ գնում եմ դեպի կյանքի վերջալույսը: Յես լիարուսն վերցրել եմ նրա առատության ովկյանից, և հոգիս լի յե սիրով դեպի նա՝ դեպի իմ որերի բարի ընկերուհին: Գեղեցիկ ու հարուստ եր իմ որը, ինչպես արևի խաղը լեռների ձյունածածկ բարձունքներում, կամ աստղալից գիշերը՝ ամրան տապ որվա: Յես սիրեցի և իմ սիրտը մի անգամ չե ծանր վիրավորված. սակայն տառապանքներով ել հպարտանում եմ յես, վորովհետև ճշմարիտ ու մաքուր եյին նրանք: Հառաչանքներով չեմ ավելացրել նրա ուժն ու բարկությամբ չեմ պակասացրել ցավերիս աղբյուրը: Վշտիս որերին կանայք ինձ համար գթության քույրեր եյին, սիրո տարիներին՝ իմ ամենալավ զգացումների մայրերը:

«Յես վայելել եմ անապատների լայնատարածութունը, ու բանտերի անձկութունը չի ճնշել իմ հոգու ազատութունը: Մենակութունն ոգտավետ է մարդուն. նա ամրապնդում է ուժեղ հոգին: Յեղել եմ ապստամբ, ուրախությամբ և զայրույթով պայքարել եմ չարերի դեմ. և յերբ հաղթել եմ, ցնծացել ե հոգիս, յերբ պարտովել՝ չեմ հուսահատվել, վորովհետև ճշմարտի հաղթանակի հավատը ամրացած էր ինձնում, և իմ անհաջողութունների սուր ժանիքները չեյին կարողանում խորտակել նրա ամրութունը: Յես հասկանում եյի, վոր չհավատալը չգիտենալ է, աշխատում եյի ըմբռնել և ըմբռնման մեջ գտա անմար հավատ:

«Յես սիրում եմ բոլոր ծաղիկները, յերկրի գունները և մարդուն՝ ամենից գեղեցիկը, վորն իմ ամբողջ կյանքում ինձ համար յեղել է գերորինակ հանելուկներից մեկը, և յես չեմ դադարիլ նրանով զմայլվելուց: Ո՛ր, վոչ, չեմ դադարիլ:

«Նրա մեջ խավարը տեսնելով, ցավել ե հոգիս զայրույթով, այրվել տառապանքով, բայց տեսնելով լույսը՝ ուրախացել: Յես կովել եմ նրա դեմ, տեսնելով նրա մեջ չարութուն, բարձրացել եմ նրա անմտութունների վրա, բայց զայրույթի ժամին ել դեպի նա ունեցածս հարգանքը չեմ կորցրել: Յեվ յերբեք չեմ կամեցել մարդկանց ուշադրութունը վրաս դարձնել, վորովհետև այն չէ թանկագինը, ինչ տալիս են ինձ, այլ այն՝ ինչ կարող եմ տալ յե՛ս. հետաքրքրական չէ թե ի՞նչ են ասում իմ մասին, այլ այն՝ թե յե՛ս ինչ եմ կարծում մարդկանց մասին: Յես ապրել եմ մենակ, իմ ներքին աշխարհում. այն, ինչ հարկավոր է ուրիշներին իմ հոգուց, յես տվել եմ բոլորին ճշմարտորեն, այն, ինչ պետք էր միմիայն ինձ, թագցրել եմ սրտիս խորքում, չգրավելով մոտիկներիս ուշադրութունը հոգուս անբերրիության թախիծով, իմ լուսան ու հոգնածության ժամերին:

«Իմ արցունքներն ու հառաչանքները չբաժանեցի մարդկանց հետ, բայց ծիծաղիս և ուրախությանս վողջ

հարստութունը նրանց տվեցի: Իմ սրտիս վերքերը յերկար ժամանակ չցավեցին, յես չթունավորեցի նրանց, չճնշեցի իմ միտքը, վորովհետև գիտեմ, վոր մարդը ծնվում է մոր ցավով ու արյունով, իսկ հոգին և՛ մայր, և՛ կնքամայր է կյանքի բոլոր ցանկութուններին:

«Յեվ ելի գիտեմ յես շատ բան, ինչ վոր անճոռնի յե՛ս կատակի քոստած շան նման. մեռնում ե արդեն, վորպես մարդկանց համար անպետքութուն: Զգվելի անպետքութունն ավելի ու ավելի վորոշ է դառնում յերկրի վրա և բոլորն ել տեսնում են անճոռնիության ավերորդութունը:

«Յես վերցրի կյանքից ամենը, ինչ կարողացա. և ելի կվերցնեմ նրա առատաձեռնութունից, վորովհետև դեռ չի հանգել իմ որը, չնայած ճանապարհս թեքվել է դեպի արեմուտք: Բայց մոռացության խավարի գիրկն ու հավիտենական լուության խորքը կիջնեմ յես շնորհակալության աշխույժ ժպտով, ինչպես իջնում է այս լուսատուն, ամբողջ որը յերկրի կրծքին թափելով իր բոլոր ճառագայթները, ուժերը և ուրախութունը: Յես ապրել եմ սքանչելի, յես գտել եմ իմ ուղին և վոչվորից շնորհակալ չպետք է լինեմ դրա համար: Մնա՛ք բարով»:

Նա հանդարտ շարունակեց բայել դեպի իր որվա վերջալույսը:

Իսկ յերեսաները ծիծաղելով ու խաղալով, վազեցին նրա յետևից:

Ց Ա Ն Կ

| | | |
|-----------------|-----------------------------|----|
| Մերկահավի յերգը | բարգվ. Գ. Մելոյան | 4 |
| Բագեյի յերգը | » » » | 6 |
| Ընկեր | » Ա. Տ. Հ. | 10 |
| Ծեբունից | » » » » | 18 |

ՊԱՅԱՆՁԵՑԵՔ

Մեր հրատարակությանք յույս տեսած հայերեն
գրքերի լրիվ յեվ մանրամասն ցուցակը առան-
ձին գրույկով, վոր ուղարկվում է ձեր:

Москва, Никольская, 10
Центриздат. Армянская Секция

3605

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.



Максим Горький.
БУРЕВЕСТНИК
и др. рассказы.

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва

Никольская. 10.

2018

